ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2020

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Սիրելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն այունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ դի՛ր X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ծ:***

1) կեցվա-ք, ծա-կոց, մազապուր-, լռակյա-
2) կատարա-ու, գլուխկոն-ի, ցն-ություն, վեհապան-
3) խավարամա-, ատաղ-ագործ, անե-ք, թխվա-ք
4) թյուրիմա-ություն, կ-կվել, փայ-աղ, կո-կել

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *մ:***

1) ա-բարիշտ, ա-պագոռգոռ, ա-բաստանել, սուսա-բար
2) ա-փոփել, հա-բավ, ա-բարտավան, հա-պատրաստից
3) կշտա-բել, ա-պաճույճ, ա-բարտակ, ս-բակ
4) ա-բասիր, գա-փռ, շա-բուտ, ա-բարձիչ

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառաձևերի) վերջին վանկն է շեշտվում:**

1) ծանրություն, մեծ-մեծ, Պուշկինի
2) կարծր, ի դեպ, արագընթաց
3) դրամարկղեր, թրխկոց, կարծես թե
4) անդրաշխարհ, ութերորդ, գլուխ տալ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:**

1) գարնանային, խճուղի, մեղրամոմ, խորազնին
2) ընտանեկան, հոգատար, ընչաքաղց, ալրաղաց
3) ուրվական, աղավնյակ, ուխտադրուժ, ցրտահար
4) ալյակ, կարեվեր, ընձուղտ, մանրանկար

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերում բաց վանկ կա:**

1) շերտավոր, պսպղուն
2) ենթարկվել, երկրապահ
3) բնաշխարհ, ընտրարշավ
4) հաղթահանդես, աջհամբույր

6 **Ո՞ր տարբերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:**

1) ՑՉԶ–6806
2) ՄՀԲ –262
3) ՆԾԹ–459
4) ՎԽԳ–2033

7 **Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:**

1) Եթե նա այս անգամ էլ **ստեր**, հայրն արդեն չէր ների:
2) Քեզնից **ստեր** շատ եմ լսել և եթե անկեղծ լինեմ, հոգնել եմ:
3) **Ստեր** տարածելով է մրցակիցներին իր ուղուց հեռացրել:
4) Դու շատ լավ գիտես՝ **ստեր** չեմ հանդուրժի:

8 **Ո՞ր տարբերակում է *գորդյան հանգույցը կտրել* դարձվածքի իմաստը ճիշտ բացատրված:**

1) պարզաբանել հարաբերությունները
2) հեռանալ բարեկամներից
3) ենթարկվել դաժան դատաստանի
4) լուծել դժվարին, խճճված խնդիրը

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:**

1) բուք, մետաքս, կարիք
2) ամբիոն, հասուն, դանակ
3) հավաք, ծորակ, փափուկ
4) եկեղեցի, դաշույն, մահակ

10 **Ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանեցված տրված բառերն իրենց բացատրություններին:**

ա. տատասկ	1. տաք քամի
բ. հյուլե	2. զանազան ծաղիկներից ստացվող բուժիչ հյութ
գ. սկահակ	3. փշոտ տերևներով խոտաբույս
դ. բալասան	4. նվազագույն մասնիկ
ե. խորշակ	

1) ա–2, բ–1, դ–4, ե–3
2) ա–2, բ–4, գ–3, ե–1
3) ա–3, բ–4, դ–2, ե–1
4) ա–3, գ–1, դ–2, ե–4

11 **Ո՞ր տարբերակի երկու բառերում էլ անկախ գործածություն *չունեցող* արմատներ կան:**

1) ծայրահեղ, դերասան
2) արնաներկ, ակնաբույժ
3) վշտալլուկ, խնկածաղիկ
4) դռնփակ, փառասեր

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) խճաքար, որմնադիր, որդեսեր, հնավանդ
2) ագեվազ, գյուղեգյուղ, ծանրաշարժ, արևավառ
3) հորդաբուխ, ալեհույզ, կաթնասուն, գետնանուշ
4) բարեխառն, կորամեջք, աչագեղ, քաջազուն

13 **Ո՞ր շարքում *վա* հոլովման ենթարկվող բառ *չկա:***

1) մարտ, բոպե, գիշեր, հիմա
2) վաղորդայն, երեկ, ազգանուն, ցայգ
3) կիրակի, երեկո, ամանոր, վայրկյան
4) կեսօր, դար, աշուն, հազարամյակ

14 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

1) գանձարկղ, կողաթև, թռչնաբույծ, միջնապատ
2) դուստր, օրհներգ, պահանջատեր, ուղեցույց
3) անասնակեր, ոտնաչափ, մորաքույր, ստեղնաշար
4) խմբագիր, կցակար, գինետուն, տոնածառ

15 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնք գերադրական աստիճանով դրված ածականներ են:**

1. ամենակեր, 2. նվազագույն, 3. մեծամեծ, 4. ամենատես, 5. խոշորագույն, 6. ամենագետ, 7. ամենահզոր, 8. ազնվագույն:

1) 1, 3, 4, 5, 7
2) 1, 2, 5, 8
3) 2, 5, 7, 8
4) 2, 3, 4, 7, 8

16 **Ո՞ր նախադասության մեջ դերբայի կամ ձևաբայի (կախյալ դերբայի) սխալ ձև *չկա:***

1) Զգում էր, որ կորելու է նաև տիկնոջ վերջին հույսը:
2) Տնային ծաղիկներ աճացնելը այնքան էլ հեշտ գործ չէ:
3) Այդ շաղակրատը ամեն տեղ էլ խոսած կլինի մեր մասին:
4) Ջրից փախնողը հայտնվեց կրակի մեջ:

17 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնք դերանուններ են.**

1. ամենայն, 2. մյուս, 3. ոչ, 4. ամենևին, 5. ուրիշ, 6. երբևէ, 7. ինքնին, 8. քանիցս, 9. այսինչ:

1) 1, 2, 5, 6, 9
2) 1, 3, 5, 7, 9
3) 2, 3, 4, 7, 8
4) 2, 4, 5, 6, 8

18 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):**

1) կառուցել, դիպչել, լուսավորել, փնտրել
2) սահմանազատել, մթնել, մարտնչել, վազվզել
3) զբոսնել, ժանգոտել, գտնել, հոգնել
4) կանգնել, կառչել, կտրտել, խրտնել

19 **Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա:***

1) Պատասխա՛ն տուր ինձ, մատնի՛չ սևաչյա, Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն…
2) Ամենահասարակ հարցն անգամ չկարողացավ ինքնուրույն լուծել:
3) Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել, Ուզում է քնել, հավիտյան քնել:
4) Գուցե Բասուտա գետը, ուրիշ գետի հետ խառնվելով, հասնում է այն ծովին:

20 **Ո՞ր տարբերակում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Նայում ես կյանքիդ անցած ճանապարհին, երբ ծանր են եղել թեթև կաթիլները, երբ ձյունը նստել է ոչ թե գլխիդ, այլ վշտամորմոք հոգուդ վրա, բոլոր տեսած ու չտեսած անուրջներիդ վրա:

1) **անցած** -կանոնավոր բայ, հարակատար դերբայ, **թեթև** -ձևի մակբայ
2) **բոլոր** -որոշյալ դերանուն, **եղել են** -անկանոն բայ, չեզոք սեռ
3) **ոչ թե** -ստորադասական շաղկապ, **ձյունը** -***ա*** ներքին հոլովում, ուղղական հոլով
4) **նայում ես** -անկատար ներկա, պարզ ժամանակաձև, **հոգուդ** -ստացական հոդով գոյական

21 **Ո՞ր նախադասության դիմաց է տեսակը սխալ նշված:**

1) Սենյակում չաղմկե՛լ: *(միակազմ, բայական անդեմ)*
2) Ինձ չեք հասկանում: *(երկկազմ, համառոտ)*
3) Անընդհատ դժգոհում է: *(թերի, ընդարձակ)*
4) Մոռացված երազնե՞ր, շուշաննե՞ր թառամած… *(միակազմ, անվանական անդեմ)*

22 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Ինչպես էր ընկել այդ ամայի վայրը՝……

1) չէ՞ որ չէր հիշում, թե մինչ այդ որտեղ էր եղել:
2) որ չէր նկատել ճանապարհից շեղվելը:
3) այդ նույն ճանապարհով էլ դուրս պիտի գար:
4) այդպես էլ դժվարանում էր պատասխանել:

23 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Նա տեսել էր ավազակների, որոնք տաճարների դռներն էին համբուրում և բարեպաշտ հռչակվում, հարստահարողների, որոնք Աստծու սեղանի կանթեղի մեջ յուղ էին լցնում, մոլլաների, որոնք այդ բոլոր մարդկանց օրհնում էին՝ նրանց բարեպաշտ հռչակելով և Աստծու պաշտամունքը նրանց ծառայեցնելով:



24 **Ո՞ր հատվածում բաղադրյալ ստորոգյալ** ***չկա:***

1) Թանապուրի տաք գոլորշին
   Գերանին առնում
   Եվ սյունն ի վար գլոր-գլոր
   Ուլունք էր դառնում:
2) Սիրո հակառակը ամենևին էլ չսիրելը չէ…
3) Երևի բան է պատահել.
   Երևի տարիներն անսիրտ
   Իմ սրտի կրակը տարել,
   Տարել են ու հետ չեն բերել…
4) Այստեղ է լացել իմ մայրը
   Մորմոքն իր և իր օրորը,
   Այստեղ այնպես անծայր է
   Թախիծը և այնպես խոր է:

25 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզ (դերբայական դարձվածով) նախադասության:**

Այնտեղ էր նաև Օհանը՝ այդ ծերունին, որ աշխարհի չարն ու բարին տեսել էր, սեփական փորձով հարստացել:

1) Այնտեղ էր նաև Օհանը՝ աշխարհի չարն ու բարին տեսած և սեփական փորձով հարստացած ծերունին:
2) Այնտեղ էր նաև Օհանը՝ աշխարհի չարն ու բարին տեսած, սեփական փորձով հարստացած այդ ծերունին:
3) Այնտեղ էր նաև աշխարհի չարն ու բարին տեսած, սեփական փորձով հարստացած Օհանը՝ այդ ծերունին:
4) Այնտեղ էր նաև աշխարհի չարն ու բարին տեսած, սեփական փորձով հարստացած ծերունին՝ Օհանը:

26 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը հատկացուցիչ:**

1) Քո **երգելու** ժամանակ դահլիճը հմայված ունկնդրում էր:
2) Գազանների հետ հացի կնստեմ, ողջույնը կառնեմ **բորենիների**:
3) Վերջապես մոտեցանք մի **շենքի**, որ չորս կողմից պատված էր աշտարակավոր պարսպով:
4) Բարձր լեռների հսկայական **շրջանակի** մեջ երևում էր ընդարձակ դաշտավայրը:

27 **Ո՞ր տարբերակում պատճառի պարագա *չկա:***

1) Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր Կախվել մեր գլխին այսպես կուրորեն:
2) Ոտքերս թրջվել էին հորդ անձրևից:
3) Իսկ գժվելուց չէ՞ փայտը ճարճատում…
4) Շտապելուց թև են առել, Դարձել թեթև թիթեռներ…

28 **Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Նույնիսկ քսան տարի անց ոչ մի մասնագետ չէր համարձակվում ձեռնամուխ լինել այդ դժվարին գործին դա նրանց ուժերից վեր էր:
2) Զարմանում եմ ինչպես կարողացավ նա գոյատևել գտնվելով թշնամական և օտար միջավայրում:
3) Թուղթը վերցնելու համար նա խոնարհվեց և միևնույն ժամանակ մի գողունի հայացք ձգեց վրաս տեսնելու դեռ նայում եմ արդյոք իր վրա:
4) Բոլորը հոգնատանջ էին և ամեն ինչից երևում էր արագաերթ էին կտրել երկարուձիգ ճանապարհը:

29 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Մինչև պարանոցը ջրի մեջ կանգնած է Տանտալոսը: Իսկ գլխավերևում հասուն մրգերով ծանրաբեռնված ծառի ճյուղեր են:
2. Մի օր նա կասկածեց աստվածներին և ցանկացավ ստուգել նրանց ամենազոր լինելը, որի համար խիստ պատժվեց: Նրան գցեցին ստորերկրյա խավար աշխարհը, որտեղ նա տանջվում էր քաղցից ու ծարավից:
3. Ըստ հունական դիցաբանության՝ Տանտալոսը Փռյուգիայի թագավորն էր: Նա վայելում էր Զևսի և բոլոր աստվածների սերն ու համակրանքը:
4. Երբ ձգվում է՝ միրգը պոկելու, ճյուղերը վեր են բարձրանում, իսկ երբ կռանում է՝ ջուր խմելու, ջրերը ցած են իջնում: Այսպես նա դատապարտված է հավիտենական տանջանքի:

1) 1, 3, 4, 2
2) 3, 2, 1, 4
3) 3, 1, 2, 4
4) 1, 4, 2, 3

30 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ:***

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վրա, Ջավախքի վրա.
Ավերակ բերդին սև ամպի նման
Ծուխն ու թշնամին չոքել են ահա:

1) անձնավորում
2) մակդիր
3) շրջադասություն
4) չափազանցություն

31 **«Սասնա ծռեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսի խոսքն է.**

Որ աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի,
Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն:

1) Մեծ Սիերի
2) Քեռի Թորոսի
3) Դավթի
4) Փոքր Սիերի

32 **Ո՞ր տողը Մ. Մեծարենցի «Սիրերգ» («Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՜ն») բանաստեղծությունից *չէ:***

1) Համբույրներ կու գան հովեն ու ծովեն
2) Լուսեղեն ճամփեն ես կանցնիմ գինով
3) Համբույրիդ, գիշե՜ր, պատուհանս է բաց
4) Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի՜

33 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում «Աբու-Լալա Մահարի» պոեմի տողերի ճիշտ հաջորդականությանը:**

1. Բանաստեղծներն են հասկացել դույզն-ինչ և թոթովում են հնչյուններն անմահ
2. Ազգեր են եկել, ազգեր գնացել և չեն ըմբռնել իմաստը նրա
3. Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝ անդուլ ու անխոնջ՝ այսպես թովչանքով
4. Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով, բյուր հրաշքներով

1) 3, 4, 1, 2
2) 4, 3, 2, 1
3) 3, 4, 2, 1
4) 4, 3, 1, 2

34 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում ի՞նչ է պատասխանում Վարդան Մամիկոնյանը Աթլրի այն հարցին, թե արդյոք հոների համար Հայաստանի վրայով կա ճանապարհ դեպի Բյուզանդիոն:**

1) Նկատելով բյուզանդացի զորավար Անատոլի ներկայությունը՝ հրաժարվում է ճանապարհ տրամադրել՝ խուսափելով Բյուզանդիայի հետ առանց այն էլ բարդ հարաբերությունների հետագա վատթարացումից:
2) Սիրով խոստանում է ճանապարհ՝ առաջարկելով հայոց ջերմ ընդունելությունն ու աջակցությունը:
3) Հոների համար դեպի Բյուզանդիոն տանող ճանապարհը համարում է մշտապես բաց, եթե նրանք դաշինք կնքեն հայերի հետ՝ ընդդեմ պարսից սպասվող պատերազմի:
4) Ասում է, որ ճանապարհ կա, բայց վերադարձ չկա՝ ակնարկելով Աթլրի՝ իր հետևից թողած սովը:

35 **Ո՞ր շարքի բոլոր գրողներն են սփյուռքահայ:**

1) Համաստեղ, Հակոբ Մնձուրի, Մուշեղ Իշխան
2) Կոստան Զարյան, Վահագն Դավթյան, Հակոբ Օշական
3) Վազգեն Շուշանյան, Դանիել Վարուժան, Վահան Թեքեյան
4) Անդրանիկ Ծառուկյան, Հակոբ Կարապենց, Սիամանթո

36 **Ութտողանի բանաստեղծությունը, որի առաջին տողը նույնությամբ կրկնվում է որպես չորրորդ և յոթերորդ տող, իսկ երկրորդ տողը՝ որպես ութերորդ, կոչվում է՝**

1) հայրեն
2) սոնետ
3) գազել
4) տրիոլետ

37 **Տրվածներից ո՞րը *չի* համապատասխանում Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի սյուժեին:**

1) Շահը Թմուկ բերդը գրավում է Թաթուլի կնոջ մատնությամբ:
2) Շահին հավատացնում են, որ Թմկա տիրուհու սրտին տիրելու դեպքում Թաթուլը անզոր կլինի նրա առաջ:
3) Թմկա տիրուհին հարբեցնում է Թաթուլին և նրա հաղթական զորքին ու թշնամու առաջ բացում բերդի դռները:
4) Շահի ուղարկած պատվիրակությունը մեծամեծ ընծաներով կարողանում է համոզել Թմկա տիրուհուն բացել բերդի դռները:

38 **Հ. Շիրազի ո՞ր ստեղծագործության բովանդակության խտացումն է հետևյալ տողը.**

«Այնինչ՝ նիրհում է աստված իր հոգում»:

1) «Հայ ժողովրդի երգը»
2) «Մայրս փոքրիկ»
3) «Բիբլիական»
4) «Կուզեի նստել մի քարի վրա»

39 **Տրված շարքերից քանիսի՞ բոլոր բառերում է բաց թողած միևնույն տառը:**

- կ-տար, դժո-ք, ա-ճատել, տա-տակամած
- գեղ-ուկ, զղ-ալ, անզի-ում, ստեր-
- թա-ցնել, տարեր-, լայնափող-, դիցու-
- խարխա-ել, ջրար-ի, եր-ներանգ, հա-շտակել
- խր-վիլակ, զար-ուղի, աղո-ք, ճ-քավոր

40 **Բառերից քանիսի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *–ունք* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.**

պարապություն, ծաղկավաճառ, բուրավետ, մասնագետ, կնամեծար, գարնանացան, զգայարան, երկարատև, բարձրատոհմիկ:

41 **Տրված հատվածում քանի՞ կապ կա:**

Չորս հոգևորական պատրիարքի գլխի վրա ամպհովանի բռնեցին: Բոլորի առջևից մի մարդ էր գնում՝ պարզած ձեռքերի մեջ ինչ-որ բան բերելով. Գրիգոր Լուսավորչի աջն էր: Խոր լռությունը խախտեցին խելահեղ բացականչությունները. հիմա արդեն ոչինչ չէր կարող կանգնեցնել ուխտավորներին: Նրանք նետվեցին առաջ: Դողդոջուն ձեռքեր պարզվեցին դեպի Լուսավորչի աջը: Երկու վանականներ որպես պահապան հրեշտակներ պահում էին այն:

42 **Ընդգծվածներից քանի՞սը դերբայական դարձված *չեն* (նախադասությունները կետադրված չեն):**

- Գնացքի շոգեկառքը զարդարված էր **փողփողացող ալ դրոշներով:**
- **Անհայտ հեռուներից մինչև նաիրյան այդ քաղաքը ձգվող** երկաթե գծերի վրայով գնացքը մոտենում էր կայարանին:
- Դա մի մեծ հյուրասրահ էր **կահավորված թանկարժեք իրերով:**
- **Խոնարհվելով բարևելը** սովորություն էր դարձրել:
- Ձիավորը **շուռ գալով** նկատեց հետապնդողներին:

43 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Թագավորն էր. հրեղեն ձին նստած, ահագին փայլուն թուրը քաշած, եկավ և խրոխտ կանգնեց դաշտի մեջտեղում:
- Տղան սպասում էր հիվանդի հրամաններին և նրան թվում էր, թե պատրաստ է ծերունու մի խոսքով կրակի մեջ նետվելու:
- Բանաստեղծը ցավով ու տառապանքով գրեց «Երկիր Նաիրին»՝ հայրենիքի ճակատագրին նվիրված մի գիրք՝ լի խորը թախիծով:
- Շապուհը՝ պարսից երկարակյաց շահը, հասցրել էր փորձել հայոց չորս թագավորներին և համոզվել, որ հայոց արքաների բյուզանդական կայսրերի հետ ունեցած մտերմության գլխավոր կռվաններից մեկը կրոնն է, մյուսը՝ մշակույթը:

44 **Ե. Չարենցի ստեղծագործություններից քանիսի՞ վերնագիրն է սխալ նշված:**

- Հեռո՜ւ, մոտիկ ընկերներին,-աշխարհներին, արևներին,-
  Հրանման հոգիներին:-
  Բոլո՜ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ-
  Բոլո՜ր նրանց հոգիներին արևավառ:-
  «Ամբոխները խելագարված»
- Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,
  Ու խնդացին լուսավոր մեր աչքերին,
  Բութ հեգնեցին մեր կարոտները հրկեզ
  Ու հեռացան: Ու ոչ մի լույս չբերին:
  «Սահման տեսիլ»
- Այն, որ ես էի, որ իմն էր առաջ,
  Արդեն չի հառնի և ոչ մի գրքում…
  «Գանգրահեր տղան»
- Գուցե հանկարծ կասկածեմ, չհավատամ ինքս, ես,
  Ու սուտ թվա իմ հոգուն քո կարոտը սրբազան…
  - Ի՜նչ էլ լինի, քո՛ւյր իմ, քո՛ւյր, հեռանալիս չանիծե՜ս
  Խե՜ղճ կարոտը թևերիս, որ երբե՜ք քեզ չհասան:
  «Հեռացումի խոսքեր»

45 **Նշել այն հատուկ անունների համարները, որոնց միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով.**

1. ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, 2. ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ, 3. ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ, 4. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, 5. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, 6. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, 7. ԲԵԼՈՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 8. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, 9. ՎԵՐԻՆ ԴՎԻՆ:

46 **Ո՞ր բառերն են կազմությամբ բարդ.**

1. բանսարկու, 2. թանկագին, 3. գովազդատու, 4. ծիրանավառ, 5. պարտիզպան, 6. հանքատեր, 7. սրտատրոփ, 8. երկաթուղի, 9. ճառագայթ:

47 **Ո՞ր նախադասություններում ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

1. Հասկացրո՛ւ նրանց, որ մարդը ազատ պիտի լինի, որ ոչ ոք ուրիշի ազատությունը ոտնահարելու իրավունք չունի:
2. Մտազբաղ թափառում էր նա և խորհում, թե ինչ ելք գտնի՝ աշխարհը փրկելու համար:
3. Այն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին. սակայն տեսնենք՝ ինչ է վաղը լինելու:
4. Մի անգամ այդ հրաշագեղ տաճարը տեսնելու է գնում թագավորի դուստրը:
5. Աստղը արդեն դուրս էր եկել. մենք շուտով ճամփա էինք ընկնելու:

48 **Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության տարբերակներից որո՞նք են սխալ:**

Զինվորները դուրս են գալիս միահամուռ ուժերով գտած թաքստոցից, սպանում են պահակազորին, բացում երկաթից դարպասները:

1. **դուրս են գալիս**–պարզ ստորոգյալ
2. **գտած**–որոշիչ
3. **պահակազորին**–ուղիղ խնդիր
4. **ուժերով**–ներգործող խնդիր
5. **միահամուռ**–ձևի պարագա
6. **դարպասները**–ենթակա

49 **Ա. Բակունցի պատմվածքների վերաբերյալ ո՞ր պնդումներում սխալ *չկա:***

1. Հրաժեշտի օրը Խոնարհը աշակերտների հետ եկել էր դպրոցի բակ՝ ուսուցչին հրաժեշտ տալու: *(«Խոնարհ աղջիկը»)*
2. Սոնայի ամուսնությունից հետո Դիլանը և Սոնան այլևս երբեք չեն հանդիպում: *(«Միրհավ»)*
3. Հնձվորը մահակը անասելի թափով իջեցնում է տղայի թիկունքին, որովհետև նա պահածոյի տուփ էր վերցրել անծանոթ մարդկանցից: *(«Ալպիական մանուշակ»)*
4. Ուսուցիչը մերժում է ճաշի հրավերը՝ պատճառ բռնելով գրքի ընթերցանությունը: *(«Խոնարհ աղջիկը»)*
5. Պատմվածքն ավարտվում է նրանով, որ Սիմոնի մայրը փորձում է մխիթարել որդուն: *(«Սպիտակ ձին»)*
6. Սոնան ամուսնությունից մոտ մեկ տարի անց մահանում է: *(«Միրհավ)*

50 **Ո՞ր հատվածներն են արևմտահայերենով:**

1. Էրնեկ ես անոր կու տամ, որ առեր իւր եարն է փախեր…
2. Կ’ուզեմ որ դադրին ձայներն այս պատիր,
   Ու նեկտարիդ դողն ըմպեմ ես անհագ…
3. Աստղերը լուռ կը հային Մութին մեջ մինչև առտու.
   Նման ցավոտ սրտերու…
4. Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի…
5. Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ Պար չես բռնում մանկական…

Բ մակարդակ

51 **Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Աստիճանաբար մոռանալով խառնիճաղան–(1) առօր–ական(2) հոգսերը և կտրվելով սրտմաշու–(3) ու տա–տկալի(4) մտքերից՝ Երեմ–ն(5) խաղաղ քուն մտավ: Ժու–կալ(6) մայրը բարեհոգի ժպիտով նայեց խա–շիկի(7) նմանվող իր որդուն, զգույշ վերցրեց մա–մարյա(8) ե–ռտանու(9) վրա դրված լաջվար–(10) զարդատուփը և դուրս եկավ սենյակից:

1) 1–ջ, 4–խ, 6–ժ, 7–փ
2) 1–ջ, 3–կ, 9–ռ, 10–դ
3) 2–ե, 4–խ, 7–փ, 8–ր
4) 2–ե, 5–յա, 6–ժ, 10–դ

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին:**

1) ի(սպառ), հետ(այսու), քառասուն(յոթ), առ(այն)
2) տն(օրինեք), առ(միշտ), ի(հեճուկս), տարեց(տարի)
3) փոխ(օգնություն), ըստ(այսմ), խոսքի(մասային), ի(զուր)
4) ձեռք(սեղմում), նոր(արեշցի), հարավ(արևմտյան), քաջ(առողջություն)

53 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) կշտամբել–պախարակել, անվրեպ–անշեղ, անսալ–լսել
2) հեղհեղուկ–երերուն, հեգնել–ծաղրել, անտունի–տնանկ
3) խրթին–մանվածապատ, անձկալի–տենչալի, շիվ–ոստյուն
4) խոնջանալ–սեթևեթել, շավիղ–կածան, կապուկ–տրցակ

54 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ** ***չկա:***

1) Գիտնականների՝ տիեզերքի ուսումնասիրությանն ուղղված ջանքերը զերծ են շահադիտական ամեն տեսակի նպատակներից:
2) Մարզպետունին զգում էր վերահասու վտանգը, սակայն չէր կարողանում իշխաններին միավորել:
3) Մեծ իմաստասերը գրեց, որ տկարամիտ են այն գլուխները, որոնց թույր կարծիքով Երկիրը լեռներից է շինված. լեռներից միայն Հայքն է շինված:
4) Թեև մրցակիցը ֆիզիկապես ուժեղ էր, բայց իր վարպետության պատճառով հայ մարզիկը կարողացավ հաղթել նրան:

55 **Ո՞ր նախադասության մեջ բայի բաղադրյալ ժամանակաձևով դրված ստորոգյալ կա:**

1) Չգիտեմ՝ վերարկուն ինչ արժի, որովհետև մի անգամ գնացի, որ նայեմ, խանութը փակ էր, ցուրտ էր. վազելով հետ եկա:
2) Մի՛ մոռացեք երախտագիտություն հայտնել ձեզ օգնած մարդկանց:
3) Նրա հետևից դուրս է գալիս մի կին՝ ինչ-որ բան շպրտելով շան կողմը:
4) Սարի վրա ամպ կա. շուտով այս ամպը պիտի իջնի սարի վրայով և փռվի մեր ձորերի վրա:

56 **Ո՞ր տարբերակում անկանոն բայ *չկա:***

1) Դեպի արևը դարեր ու դարեր թռի՛ր, սլացի՛ր, ազնի՛վ քարավան:
2) Բայց աչքերը մեր արևներ չտեսան, Եվ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ:
3) Էլի գարուն կգա, կբացվի վարդը:
4) Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով:

57 **Ընդգծվածներից ո՞րն է շաղկապ (նախադասությունները կետադրված չեն)**:

1) **Չնայած** եղանակն արդեն ցրտել էր նա աշնանային թեթև հագուստով էր:
2) Այսօր ժամանակ չենք ծախսելու խնդրի լուծման **այլ** տարբերակների քննարկման վրա:
3) Չգիտես ինչու համոզված էի որ ամեն առավոտ **հենց** նույն տեղում կհանդիպեմ նրան:
4) **Մինչև** գյուղից հեռանալը որոշեց այցելել նաև տարեց ուսուցչին:

58 **Ո՞ր նախադասության մեջ միջոցի անուղղակի խնդիր կա:**

1) Գարնանային տաք օդը հագեցած էր հողի ու արևի զգլխիչ բուրմունքով:
2) Նա, սամույրե մեծ օձիքով մուշտակը հագին, շրջում էր Սյունիքում՝ աղետի դեմն առնելու համար միջոցներ որոնելով:
3) Այդ գիշեր, երբ ձմռան քամին սաստիկ ոռնում էր, նրա գլխով մի միտք անցավ՝ օրագիր պահել:
4) Իշխանը սիրով լսեց նրա խնդրանքը, բոլոր հանգամանքների մասին տեղեկություն առավ նրանից:

59 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

-Երկու շաբաթ է՝ քույրդ չի զանգահարել,- հուզված ասաց ինձ մայրս, ապա ավելացրեց.- նեղացել է ինձնից:

1) Մայրս հուզված ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել, ապա ավելացրեց, որ ինքը նեղացել է նրանից:
2) Մայրս հուզված ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել, ապա ավելացրեց, որ նեղացել է նրանից:
3) Մայրս ինձ հուզված ասաց, ապա ավելացրեց, որ երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել. նեղացել է իրենից:
4) Մայրս հուզված ասաց ինձ, որ երկու շաբաթ է՝ քույրս չի զանգահարել, ապա ավելացրեց, որ նեղացել է իրենից:

60 **Ո՞ր տարբերակում ենթակա ստորադաս նախադասություն *չկա:***

1) Ինձ դուր էր գալիս, թե ինչպես էր նա գլխարկը ձիգ դնում գլխին և եզրերը մի քիչ վեր բարձրացնում:
2) Ամենազարմանալին այն էր, որ ոչինչ չէր փոխվել իմ մանկության գյուղում:
3) Միգուցե և լավ էր, որ նա ինձ չթողեց այդ մեքենան գործի գցել ու դրանով ճամփա գնալ:
4) Հետճաշյա հանգստի ժամանակ մեզ կարգադրվեց, որ հանգիստ մնանք, այս ու այն կողմ չվազենք:

61 **Ո՞ր հատվածը Վ. Տերյանի որ բանաստեղծությունից է:**

ա. Կար մի երգ հեռավոր աշխարհում,-
Դու այն երգն ես կրկնում հեռավոր-
«Ես սիրում եմ, դու ինձ չես սիրում»,
Եվ հին են քո խոսքերը բոլոր…

բ. Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
Կարոտավառ երազում ենք միշտ իրար…

գ. Այնպես գգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նազով են փակվում:

դ. Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց,
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին…

1. «Fatum»
2. «Գարուն»
3. «Տխրություն»
4. «Կարուսել»

1) ա–3, բ–2, գ–1, դ–4
2) ա–4, բ–3, գ–1, դ–2
3) ա–3, բ–2, գ–4, դ–1
4) ա–4, բ–1, գ–2, դ–3

62 **Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսի նկարագիրն է.**

«Երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանավորի ալ չէր նմաներ, արհեստավորի ալ չէր նմաներ, գործավորի ալ չէր նմաներ և վերջապես անանկ բանի մը կնմաներ, որուն նմանը չկա»:

1) խմբագրի
2) բժշկի
3) բանաստեղծի
4) դերասանի

63 **Բառազույգերից քանի՞սն են կազմված հականիշներից.**

ասպնջական–անհյուրընկալ, հորդածուփ–անջրդի, խորունկ–ծանծաղ, խորդուբորդ–ողորկ, անաչառ–կողմնակալ, աստանդական–նստակյաց, տարակարծիք–անտարակույս, գողտրիկ–բացահայտ:

64 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- *Այսօրվա հանգիստ պայմաններում ստեղծագործողները չեն կարող պատկերացնել այն ժամանակվա գրողի վիճակը:*
  Նրանք, ովքեր ստեղծագործում են այսօրվա հանգիստ պայմաններում, չեն կարող պատկերացնել այն ժամանակվա գրողի վիճակը:
- *Դերասանի արժանիքները թվարկելիս Փափազյանն առաջնային էր համարում նրա իմացականության աստիճանը:*
  Երբ Փափազյանը թվարկում էր դերասանի արժանիքները, առաջնային էր համարում նրա իմացականության աստիճանը:
- *Իմ հանցանքը աքսորված ուսանողների հետ ծանոթանալս էր:*
  Այն, որ ծանոթացել էի աքսորված ուսանողների հետ, իմ հանցանքն էր:
- *Այդ մառախլապատ երկնքի տակ է անցկացնում իր տարիները երկրից արտագաղթածների բազմությունը:*
  Այդ մառախլապատ երկնքի տակ է անցկացնում իր տարիները այն բազմությունը, որն արտագաղթել է երկրից:

65 **Նախադասություններից քանիսո՞ւմ ներգործական սեռի բայ կա:**

- Երբ վրանի մոտ լսվեցին մոր բոբիկ ոտքերի ձայնն ու զգեստի խշշոցը, տղան սիրտ առավ:
- Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և թվում է, թե փրկության ուղի չկա:
- Խարխուլ սանդուղքով վայր իջավ, մի քանի րոպե անիմաստ քայլեց բակում ու մոտեցավ մառանի դռանը:
- Ինչպե՞ս եղավ, որ աշխարհը այսպես փոխվեց, ո՞ւր գնացին այն օրերը, երբ սնդուկում զրնգում էր ոսկին:
- Ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որը փրկելու էր գյուղը:

66 **Նշել այն բառերի համարները, որոնցում ածանցի հնչյունափոխություն կա.**

1. վերնահարկ, 2. մշակութային, 3. սփռոց, 4. աշխուժանալ, 5. որկրամոլ,
6. փախստական, 7. վարչապետ, 8. վրձնահարված, 9. ժողովրդավար:

67 **Ո՞ր նախադասություններում բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1. Կարելի էր տեսնել ներկարարների որոնց բարձրավիզ կոշիկների վրա երևում էին ամեն գույնի ներկերի հետքեր սևից մինչև սպիտակ:
2. Պառավը կարծում էր Աղունը կախարդել է իր որդուն և հիմա այնտեղ նա նրան է պարզում իր բարի ժպիտը:
3. Նա խորհրդավոր ժպիտը դեմքին դիմավորեց ամուսնուն սակայն բոլորն էլ լավ հասկանում էին թե այդ կինն ինչ էր մտածում իրականում:
4. Իմ առջև փռված են հայրենի դաշտերը լուռ խաղաղ ու հարազատ դաշտերը:
5. Թե ուր էին կորել թերահավատ նախապաշարումներս ու խոհերս որոնք անընդհատ ճնշում էին ուղեղս քաղաքի փոշոտ փողոցներում ես չեմ կարող ասել:

68 **Նշել այն մտքերի համարները, որոնք հակասում են տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

1943 թվականին, չունենալով ո՛չ սեփական կացարան, ո՛չ փող, Նյու Յորքի հյուրանոցներից մեկում իր մահկանացուն կնքեց մեծ ֆիզիկոս Տեսլան՝ էլեկտրատեխնիկայի պոետը: Նա կյանքից հեռացավ լուռ ու աննկատ:

Նրա անվան հետ բազմաթիվ լեգենդներ ու առասպելներ են կապված: Դեռ մանկության տարիներից իր ընդունակությունների խորհրդավորությամբ նա զարմացնում, անգամ վախեցնում էր իրեն շրջապատող մարդկանց: Մի անգամ նա մեծ դժվարությամբ կարողացավ տանը պահել իր հյուրերին, որոնք շտապում էին կայարան: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ գնացքն աղետի է ենթարկվել: Նա տեսնում էր մթության մեջ…

1884 թ. Տեսլան մեկնեց Ամերիկա՝ Թոմաս Էդիսոնի մոտ: Նյու Յորք հասավ՝ գրպանում ունենալով 4 ցենտ և իր նախկին գործատուի կողմից Էդիսոնին հասցեագրված մի նամակ, որում գրված էր. «Ես ճանաչում եմ երկու մեծ մարդկանց, որոնցից մեկը Դուք եք, երկրորդը՝ այս երիտասարդը»… Սնանկացած գիտնականը անգամ հրաժարվեց Նոբելյան մրցանակից, որը տրվել էր իրեն և Էդիսոնին, և այն ոչ մեկին չշնորհվեց:

Տեսլան՝ 20-րդ դարի այդ ամենաառեղծվածային գիտնականներից մեկը, հավատացած էր, որ ինքն ընդունում է տիեզերքից ինչ-որ մեկի կողմից պարբերաբար հաղորդվող ազդանշաններ, որոնք մարդիկ ի վերջո կվերծանեն: Խորհելով այլմոլորակայինների հետ հաղորդակցվելու մասին՝ նա գրում է. «Հանուն պատմական այդ մեծ առաքելության, հանուն նրա, որ իրականանա այդ հրաշքը, ես իմ կյանքը կտայի»:

1. Իր մի արտառոց ունակության շնորհիվ Տեսլան մի անգամ փրկել է մարդկանց աղետի ենթարկվելուց:
2. Տեսլան առաջարկել է տիեզերքից հաղորդվող ազդանշանների վերծանման եղանակներ:
3. Նույնիսկ սնանկացած վիճակում Տեսլան հրաժարվեց Նոբելյան մրցանակից, և այն շնորհվեց միայն Էդիսոնին:
4. Տեսլան պատրաստ էր կյանքը տալու՝ այլմոլորակայինների հետ կապ հաստատելու երազանքն իրականացած տեսնելու համար:
5. Երբ Տեսլան արդեն հայտնի էր իր գիտական մի շարք գյուտերով, ի հայտ եկան նրա՝ ապագան կանխատեսելու ունակությունները:

69 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Ենթական և ստորոգյալը կապակցվում են համաձայնությամբ և խնդրառությամբ:
2. Բուն բացահայտիչը կարող է ինչպես հաջորդել, այնպես էլ նախորդել իր լրացյալին:
3. Բայն իր լրացումների հետ կապակցվում է խնդրառությամբ և համաձայնությամբ:
4. Շրջուն շարադասությունը համարվում է շարադասական սխալ:
5. Մասնավորող պարագայական բացահայտիչը երբեմն հոլովով համաձայնում է բացահայտյալին, երբեմն՝ ոչ:
6. Եթե ենթական ունենում է մեկից բարձր թիվ ցույց տվող որոշիչ լրացում, ապա կարող է դրվել թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Մակբայները լինում են տեղի, ժամանակի, նպատակի, ձևի, չափ ու քանակի:
2. Բոլոր մակբայները նախադասության մեջ կարող են դառնալ ինչպես բայական, այնպես էլ գոյականական անդամի լրացում:
3. Միևնույն բառը կարող է լինել և՛ մակբայ, և՛ կապ՝ նայած կիրառության:
4. Բոլոր տեսակի մակբայներն ունեն իրենց փոխարինող ցուցական դերանուններ:
5. Գոյականներից արմատի կրկնությամբ կարող են կազմվել մակբայներ:
6. ***-բար, -պես, -որեն, -ային*** վերջածանցներով կազմվում են միայն մակբայներ: